

Հանդիպում՝ Արքեպիսկոպոս Օշական Չոլոյեանի Հետ

Կիրակի 10 Փետրուար, 2013-ին, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գործադիր Տնօրէն՝ Տիար Լեւոն Ֆիլեան եւ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ՝ Վերապատուելի Յարութիւն Մելիմեան, հիւրընկալուեցան Գերաշնորհ՝ Տէր Օշական Արք. Չոլոյեան կողմէ եւ հաղորդակցութեան առանցքը դարձաւ Սուրիոյ դիմագրաւած Սուրիահայ ժողովուրդին տիրութիւն ընելու պարտաւորութիւնը: Սրբազան Հայրը իր պատրաստակամութիւնը յայտնեց ոչ մէկ ջանք խնայելու, օգտակար ըլլալու Սուրիաբնակ Սուրիահայութեան վիճակը մեղմացնելու: Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գործադիր Տնօրէն՝ Տիար Լեւոն Ֆիլեան, իր կարգին շնորհակալութիւն յայտնեց իր հիւրընկալ զգացողութեան համար եւ այս առթիւ վերանորոգուեցաւ համագործակցութեան տրամադրութիւններն ու հասկացողութիւնը գոյգ եկեղեցիներուն միջեւ:



